31. ԳՆՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Գնման ընթացակարգն անցկացնելիս գնման Մասնակիցների նկատմամբ կարող են սահմանվել հետևյալ պահանջները.

- գնման Մասնակցի համապատասխանությունը գնման առակա հանդիսացող ապրանքների մատակարարում, աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում իրականացնող անձանց նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին;
- գնման Մասնակիցների ունեցած իրավասությունը պայմանագիր կնքելու համար;
- Գնման մասնակից - իրավաբանական անձի լիկվիդացման, վերակազմավորման չիրականացումը և արբիտրաժային դատարանի կողմից Գնման մասնակից-իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ սնանկ ճանաչելու մասին որոշման բացակայությունը և մրցության ժամանակ վարույթի բացումը;

30. ОТБОРОЧНЫЕ И ОЦЕНОЧНЫЕ КРИТЕРИИ

- 30.1. Отборочные и оценочные критерии в целях допуска (отказа в допуске) Участников закупки к дальнейшему участию и заявок таких Участников закупок устанавливаются в закупочной документации.
- 30.2. Победитель закупки определяется Закупочной комиссией в соответствии с критериями оценки и порядком оценки и сопоставления заявок на участие в закупке, устанавливаемыми в закупочной документации.
- 30.3. Применение требований и критериев к Участникам закупки, к заявке на участие в закупке, а также порядка оценки и сопоставления заявок на участие в закупке, неотраженных в закупочной документации не допускается.

31. ТРЕБОВАНИЯ К УЧАСТНИКАМ ЗАКУПКИ

При проведении закупочной процедуры к Участникам закупки могут устанавливаться следующие требования:

- соответствие Участника закупки требованиям, устанавливаемым в соответствии с законодательством РА к лицам, осуществляющим поставки товаров, выполнение работ, оказание услуг, являющихся предметом закупок;
- правомочность Участников закупки заключить договор;
- непроведение ликвидации, реорганизации Участника закупки - юридического лица и отсутствие решения арбитражного суда о признании Участника закупки - юридического лица, индивидуального предпринимателя банкротом и об открытии конкурсного производства;

- գնումների ընթացակարգում մասնակցության հայտի ներկայացման օրը գնման Մասնակցի գործունեության չդադարեցումը «Վարչական իրավասխատուների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված կարգով;
- հարկային տուրքերի և ՀՀ սոցիալական ապահովության պարտադիր վճարների մասով ժամկետանց պարտավորությունների բացակայություն դատական կարգով չեն կարող սնանկ ճանաչվել;
- գործադիր մարմնի ներկայացուցիչները հայտի ներկայացմանը նախորդող 3 տարիների ընթացքում չպետք է դատապարտված լինեն տնտեսական գործունեությանը կամ պետական ծառայությանն ուղղված հանցանքի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությանը հանված կամ մարված է օրենքով սահմանված կարգով;
- չպետք է ներառված լինեն գնումների ընթացակարգում մասնակցության իրավունք չունեցող անձանց ցանկում;
- գնման Մասնակցի-ֆիզիկական անձի կամ ղեկավարի, կոլեգիալ գործադիր մարմնի անդամների, գնման Մասնակցի-իրավաբանական անձի գլխավոր հաշվապահի մոտ տնտեսագիտության ոլորտում կամ նախապես կենդիված կամ ոչ հավաստի տեղեկությունների տրամադրման համար դատվածության բացակայություն, ինչպես նաև նշված անձանց նկատմամբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելու, որակագրվման միջոցով վարչական պատժի չկիրառումը; մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ գնման Մասնակցի բացառիկ իրավունքների տնօրինումը, եթե Շնկերությունը պայմանագրի կատարման հետ կապված ձեռք է բերում նման մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքներ:
- գնման Մասնակցի ֆինանսատնտեսական գործունեության ցուցանիշները պետք է վկայեն նրա վճարունակության և ֆինանսական կայունության մասին:
- համապատասխանությունը Պատվիրատուի սահմանած և գնումային փաստաթղթերում նշված անհրաժեշտ որակավորման մինիմումին, ներառյալ որակավորված անձնակազմի, արտադրական հզորությունների, տեխնոլոգիաների և այլնի առկայությունը:
- պարտադիր ինտերնետ ռեսուրսներում գնումային ընթացակարգի մասին տեղեկատվություն տեղադրելուց հետո վերջին երկու տարվա ընթացքում ապրանքների, աշխատանքների,
- неприостановление деятельности Участника закупки в порядке, предусмотренном Кодексом РА об административных правонарушениях, на день подачи заявки в целях участия в закупочной процедуре;
- отсутствие просроченной задолженности по налоговым платежам и платежам обязательного социального обеспечения Республики Армения – не могут в судебном порядке признаваться банкротством;
- представители исполнительного органа в течение трех лет, предшествующих моменту представления заявки, не должны быть осуждены за преступление, направленное против экономической деятельности или государственной службы, за исключением случаев, когда судимость снята или погашена в установленном законом порядке;
- не должны быть включены в список участников, не имеющих право участия в процессе закупок лица.
- отсутствие у физического лица Участника закупки либо у руководителя, членов коллегиального исполнительного органа, главного бухгалтера юридического лица – Участника закупки судимости за преступления в сфере экономики или связанные с предоставлением заведомо ложных или недостоверных сведений, а также неприменение в отношении указанных лиц наказания в виде лишения права занимать определенные должности или заниматься определенной деятельностью и административного наказания в виде дисквалификации; обладание Участниками закупки исключительными правами на объекты интеллектуальной собственности, если в связи с исполнением договора Общество приобретает права на такие объекты интеллектуальной собственности;
- показатели финансово-хозяйственной деятельности Участника закупки должны свидетельствовать о его платежеспособности и финансовой устойчивости;
- соответствие необходимому квалификационному минимуму, устанавливаемому Заказчиком и указанному в закупочной документации, включая наличие квалифицированного персонала, производственных мощностей, технологий и т.д.;
- наличие за последние два года, предшествующие размещению информации о закупочной процедуре на обязательных Интернет-ресурсах, опыта выполнения не

ծառայությունների առնվազն երկու նույնատիպ առարման փորձ՝ գնումային փաստաթղթերով սահմանված պայմանագրի սկզբնական (առավելագույն) գնի առնվազն 50% արժեքով: Ընդ որում, գնումային փաստաթղթերում նշված պետք է լինի, թե որ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները համանման կհամարվեն գնվող ապրանքներին: Նշված պահանջը սահմանելիս Պատվիրատուն իրավասու է ավելացնել համանման այն պայմանագրերի արժեքը, որոնցով կարող է հաստատվել առարման իրականացման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման փորձը պոտենցիալ մասնակցի կողմից:

- գնումային ընթացակարգի մասին տեղեկատվության տեղադրումից առնվազն մեկ տարի առաջ պարտադիր ինտերնետ ռեսուրսներում որպես իրավաբանական անձի կամ անհատ ձեռներեցի գրանցումը,
- գնման Մասնակիցը չպետք է ունենա ժամկետներում չկատարած պարտավորություններ երրորդ անձանց և, մասնավորապես, Ընկերության նկատմամբ;
- բացասական արբիտրաժային փորձի բացակայություն;
- Մասնակցի մասին տվյալների բացակայություն ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անբարելիսի դ մատակարարների Ընկերության անվանացանկում;
- ինչպես նաև գնումային փաստաթղթերով և սույն կանոնակարգով Մասնակիցների նկատմամբ սահմանված գնման այլ պահանջներ:

32. ԳՆՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- 32.1. Գնումային փաստաթղթերը պետք է պարունակեն գնումների մասնակցության հայտերի գնահատման և համեմատման կարգը և չափանիշները:
- 32.2. Գնումների մասնակցության հայտերի գնահատման համար գնման կազմակերպիչը գնումային փաստաթղթերում կարող է սահմանել հետևյալ չափանիշները.
 - պայմանագրի գինը (լոտի գինը);
 - ապրանքների վերանորոգման և շահագործման, աշխատանքների արդյունքի օգտագործման ծախսերը;
 - գնման առարկայի որակական, ֆունկցիոնալ և (բնապահպանական) էկոլոգիական բնութագրերը;

менее двух аналогичных поставок товаров, работ, услуг, стоимостью не менее 50 (пятидесяти) процентов начальной (максимальной) цены договора, установленной в закупочной документации. При этом в закупочной документации должно быть указано, какие товары, работы, услуги будут считаться аналогичными закупаемым товарам, работам, услугам Заказчик при установлении указанного требования, вправе увеличить размер стоимости аналогичных договоров, которыми может быть подтвержден опыт реализации поставок, выполнения работ, оказания услуг потенциальным участником;

- регистрация в качестве юридического лица или индивидуального предпринимателя не позднее, чем за один год до даты размещения извещения о закупке на обязательных Интернет-ресурсах;
- участник закупки не должен иметь невыполненных в срок обязательств перед третьими лицами и в частности перед Обществом;
- отсутствие негативной арбитражной практики;
- отсутствие сведений об Участнике в реестре недобросовестных поставщиков товаров, работ и услуг Общества;
- а также иные требования по отношению к Участникам закупки, установленные закупочной документацией и настоящим Положением.

32. КРИТЕРИИ ОЦЕНКИ ЗАЯВОК НА УЧАСТИЕ В ЗАКУПКЕ

- 32.1. Закупочная документация должна содержать порядок и критерии оценки и сопоставления заявок на участие в закупке.
- 32.2. Для оценки заявок на участие в закупке Организатор закупки может в закупочной документации устанавливать следующие критерии:
 - цена договора (цена лота);
 - расходы на эксплуатацию и ремонт товаров, на использование результатов работ;
 - качественные, функциональные и экологические характеристики предмета закупок;

- գնման Մասնակիցների որակավորումը, ընդ որում, ֆինանսական ռեսուրսների, սարքավորումների և այլ նյութական ռեսուրսների, ինչպես նաև աշխատանքային փորձի, պայմանագրի կատարման համար որոշակի մակարդակի որակավորում ունեցող անհրաժեշտ քանակությամբ մասնագետների (աշխատողների) առկայությունը գնման Մասնակցի մոտ;
- այլ չափանիշներ:

32.3. Գնումային փաստաթղթերով սահմանված գնումների մասնակցության հայտերի գնահատման և համեմատման կարգով և չափանիշներով կարող է նախատեսվել գնահատման որակական և որակավորման չափանիշների, ինչպես նաև գնման Մասնակիցների կողմից առաջարկվող այլ չափանիշների օգտագործումը:

32.4. Որակական և որակավորման չափանիշներին համաձայն գնումների ընթացակարգում մասնակցության հայտերի գնահատման և համեմատման ժամանակ պետք է գնահատվեն գնման Մասնակցի գործարար հեղինակությունը, արտադրական հզորությունների, տեխնոլոգիական սարքավորումների, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների առկայությունը, պայմանագրի կատարման մեջ ներգրավված գնման Մասնակցի աշխատողների փորձը և որակավորումը և պայմանագրի կատարման համար անհրաժեշտ այլ ցուցանիշներ, ինչպես նաև ֆունկցիոնալ բնութագրեր (սպառողական բնույթի) կամ ապրանքի որակական բնութագրի (ապրանքի գնման դեպքում) և առաջարկվող աշխատանքների և ծառայությունների որակը:

ԳԼՈՒԽ IV.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

33. ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԾԱՐՔԻ ՀԱՄԱՐ

33.1. Նախնական ընտրությունը գնումների շարքի համար - սույն կանոնակարգով նախատեսված բաց ընթացակարգ է՝ գնումների տնսակների համադրության կիրառմամբ, որի արդյունքն է հանդիսանում գնման շարքի համար նախնական ընտրությունը հաջողությամբ անցած և գնման շարքի համար նախնական ընտրություն անցկացնելու մասին փաստաթղթերով

- квалификация Участников закупки, включая наличие у Участника закупки финансовых ресурсов, оборудования и других материальных ресурсов, опыта работы, необходимого количества специалистов (работников) определенного уровня квалификации для исполнения договора;
- иные критерии.

32.3. Порядок и критерии оценки и сопоставления заявок на участие в закупке, установленные закупочной документацией, может предусматривать использование качественных и квалификационных критериев оценки, а также иных критериев, характеризующих условия исполнения договора, предлагаемых Участниками закупки.

32.4. При оценке и сопоставлении заявок на участие в закупочной процедуре в соответствии с качественными и квалификационными критериями должна оцениваться деловая репутация Участника закупки, наличие у него производственных мощностей, технологического оборудования, трудовых, финансовых ресурсов, квалификация и опыт работников Участника закупки, привлекаемых к исполнению договора, и иные показатели, необходимые для исполнения договора, а также функциональные характеристики (потребительские свойства) или качественные характеристики товара (при закупке товаров) и качество предлагаемых работ и услуг.

ГЛАВА IV.

СПОСОБЫ ЗАКУПОК И УСЛОВИЯ ПРИМЕНЕНИЯ

33. ПРЕДВАРИТЕЛЬНЫЙ ОТБОР ДЛЯ СЕРИИ ЗАКУПОК

33.1. Предварительный отбор для серии закупок – открытая процедура, применяемая в сочетании с предусмотренными настоящим Положением способами закупок, результатом которой является составление перечня Участников закупки, успешно прошедших предварительный отбор для серии закупок и допускаемых к участию в

- սահմանված ապրանքների գնման հետագա ընթացակարգերում մասնակցության թույլտվություն ունեցող գնման Մասնակիցների ցանկի ձևավորումը: Նախնական ընտրության անցկացման կարգն ու պայմանները, այդ թվում՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների այն տեսակների, որոնց համար կարող է կիրառվել գնման տվյալ տեսակը, սահմանվում են Ընկերության ԼԱ:
- 33.2. Գնման շարքի համար նախնական ընտրությունը կարող է կիրառվել գնման ցանկացած տեսակի համադրությամբ, բացառությամբ «միակ աղբյուրից»:
- 33.3. Գնման շարքի համար նախնական ընտրության արդյունքները կարող են օգտագործվել մի քանի տարբեր գնումներ անցկացնելիս:
- 33.4. Սույն կանոնակարգով նախատեսված որևէ տեսակով (բացառությամբ «միակ աղբյուրից կատարված գնումներ») գնումներ անցկացնելիս՝ Գնումների շարքի համար նախնական ընտրության արդյունքների օգտագործումը իրականացվում է գնման մասնակիցների հայտերի գնահատման ընտրության չափանիշներից մեկի սահմանումով:
- 33.5. Ինքնին գնումներ անցկացնելիս բաց նախնական ընտրության արդյունքների օգտագործումը Մասնակիցների գնումներում մասնակցության թույլտվության այլ սահմանափակումների բացակայության պարագայում, չի նշանակում փակ գնումային ընթացակարգի կիրառում:
- 33.6. Գնումների շարքի համար նախնական ընտրության համադրությունը գնման այլ միջոցի հետ, որն անցկացնելիս օգտագործվում են գնումների շարքի համար նախնական ընտրության արդյունքները, ձևավորում է գնումային միասնական ընթացակարգ:
- 33.7. Գնումների շարքի համար նախնական ընտրություն անցկացնելու մասին փաստաթղթերով սահմանված չափանիշներին համապատասխանող արտադրանքի գնման դեպքում, գնումների շարքի համար նախնական ընտրության արդյունքների օգտագործումն իրականացվում է միայն Պատվիրատուի նախաձեռնությամբ: Գնումների կազմակերպիչը գնումներն անցկացնելիս ազատ է գնումների շարքի համար նախնական ընտրության արդյունքների օգտագործման/չօգտագործման մասին որոշում կայացնելու մեջ:
- 33.2. Предварительный отбор для серии закупок может применяться в сочетании с любым из способов закупок, за исключением закупки «у единственного источника».
- 33.3. Результаты одного предварительного отбора для серии закупок могут использоваться при проведении нескольких различных закупок.
- 33.4. Использование результатов предварительного отбора для серии закупок осуществляется путём установления в качестве одного из отборочных критериев оценки заявок участников закупки при проведении закупки любым из предусмотренных настоящим Положением способов (за исключением закупки «у единственного источника») требования о наличии в отношении участника закупки решения Закупочной комиссии о признании участника закупки успешно прошедшим предварительный отбор для серии закупок.
- 33.5. Использование результатов открытого предварительного отбора при проведении закупки само по себе, в отсутствие иных ограничений допуска участников к участию в закупке, не означает применение закрытой закупочной процедуры.
- 33.6. Предварительный отбор для серии закупок в сочетании с другим способом закупки, при проведении которого используются результаты предварительного отбора для серии закупок, образует единую закупочную процедуру.
- 33.7. При закупках продукции, соответствующей установленным документацией о проведении предварительного отбора для серии закупок критериям, использование результатов предварительного отбора для серии закупок осуществляется только по инициативе Заказчика. Организатор закупки при проведении закупки свободны в принятии решения об использовании/неиспользовании результатов предварительного отбора для серии последующих закупок.

- 33.8. Գնումների շարքի համար նախնական ընտրության արդյունքների գործողության ժամկետը չի կարող կազմել որոշումն ընդունելու և համապատասխան համաձայնագրերի ստորագրման օրվանից երեք տարուց ավել: Նախնական ընտրության արդյունքների գործողության հստակ ժամկետը սահմանվում է գնումային փաստաթղթերում Ընկերության ԼՍ սահմանված կարգով: Մատակարարված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի վատթարացման, մատակարարված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների արժեքի բարձրացման դեպքում Պատվիրատուն իրավասու է չեղյալ համարել գնման շարքի համար նախնական ընտրության արդյունքները և/կամ համաձայն Ընկերության ԼՍ փոփոխել նախկինում ընտրած մատակարարների (կատարողների) կազմը:
- 33.9. Գնումների շարքի համար նախնական ընտրություն անցկացնելու հիմք է հանդիսանում Ընկերության հաստատված ԳՏՊ կամ Ընկերության ԳԼՄ-ի որոշումը:
- 33.10. Եթե գնումների շարքի համար նախնական ընտրությունը հաջողությամբ անցած ճանաչված գնումների Մասնակիցը դադարում է համապատասխանել գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման փաստաթղթերով սահմանված պահանջներին, ապա այդպիսի Մասնակցի մասով կարող է ընդունվել որակավորված մասնակիցների ցուցակից հանելու որոշում՝ համաձայն գնման փաստաթղթերի պահանջներին:
- 33.8. Срок действия результатов предварительного отбора для серии закупок не может составлять более трёх лет с даты принятия решения и заключения соответствующих соглашений. Конкретный срок действия результатов предварительного отбора устанавливается в закупочной документации в порядке, установленном ЛА Общества. В случае ухудшения качества поставляемых товаров, работ, услуг, увеличения стоимости поставляемых товаров, работ услуг Заказчик вправе принять решение о досрочном аннулировании результатов предварительного отбора для серии закупок и/или об изменении состава выбранных ранее поставщиков (исполнителей) в соответствии с ЛА Общества.
- 33.9. Основанием для проведения предварительного отбора для серии закупок является утвержденная ГПЗ Общества или решение ЦЗО Общества.
- 33.10. Если Участник закупки, признанный успешно прошедшим предварительный отбор для серии закупок, перестает соответствовать требованиям, установленным в документации о проведении предварительного отбора для серии закупок, в отношении него может быть принято решение об исключении из перечня квалифицированных участников в соответствии с требованиями закупочной документации.

Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման առանձնահատկությունները:

Особенности проведения предварительного отбора для серии закупок

33.11. Գնումների շարքի համար նախնական ընտրությունը անց է կացվում սույն կանոնակարգով սահմանված կարգին համապատասխան, եթե այլ բան սահմանված չէ կանոնակարգի սույն բաժնով կամ չի բխում գնումների շարքի համար նախնական ընտրության ընթացակարգի էությունից:

33.11. Предварительный отбор для серии закупок проводится в порядке, предусмотренном настоящим Положением, если иное не установлено настоящим разделом Положения или не вытекает из сути процедуры предварительного отбора для серии закупок.

33.12. Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման համար անհրաժեշտ է՝

33.12. В целях проведения предварительного отбора для серии закупок необходимо:

1) սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան մշակել և տեղադրել գնումների շարքի համար անցկացման մասին ծանուցումը, գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերը;

1) в соответствии с требованиями настоящего Положения разработать и разместить извещение о проведении предварительного отбора для серии закупок, документацию о проведении предварительного отбора для серии закупок;

2) փաստաթղթերով սահմանված ժամկետներում ներկայացնել անհրաժեշտ պարզաբանումներ՝ գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանման մասին գնման մասնակիցներից հարցումներ ստանալու դեպքում;

2) в случае получения от Участников закупки запросов на разъяснение положений документации о проведении предварительного отбора для серии закупок предоставлять необходимые разъяснения в сроки, установленные в документации;

3) անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին ծանուցման, ինչպես նաև գնումների շարքի համար նախնական ընտրություն անցկացնելու մասին փաստաթղթերի մեջ;

3) при необходимости вносить изменения в извещение о проведении предварительного отбора для серии закупок, документацию о проведении предварительного отбора для серии закупок;

4) ընդունել գնումների շարքի համար նախնական ընտրության մասնակցելու մասին այն հայտերը, որոնք ներկայացվել են ըստ գնումների սերիայի համար անցկացվող նախնական ընտրության մասին փաստաթղթերում սահմանված կարգի և ժամկետների;

4) принимать заявки на участие в предварительном отборе для серии закупок, поданные в срок и в порядке, установленные в документации о проведении предварительного отбора для серии закупок;

5) իրականացնել գնումների շարքի համար նախնական ընտրության մասնակցության հայտերի ծրարների բացումը;

5) осуществлять вскрытие конвертов с заявками на участие в предварительном отборе для серии закупок;

6) գնահատել գնումների շարքի համար նախնական ընտրությանը մասնակցելու հայտերը՝ ըստ գնումների սերիայի համար նախնական ընտրության անցկացման կարգով սահմանված չափանիշների;

6) оценить заявки на участие в предварительном отборе для серии закупок по отборочным критериям, содержащимся в документации о порядке проведения предварительного отбора для серии закупок;

7) որոշում ընդունել գնումների շարքի համար նախնական ընտրության կարգի մասին փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխանող Մասնակիցներին գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրությունը հաջողությամբ անցած

7) принять решение о признании Участников закупки, заявки которых соответствуют требованиям документации о порядке проведения предварительного отбора для серии закупок, успешно прошедшими предварительный отбор для серии

Մասնակիցներ ճանաչելու մասին;

- 8) որոշում ընդունել գնումների շարքի համար նախնական ընտրության կարգի մասին փաստաթղթերով սահմանված պահանջներին չհամապատասխանող գնման Մասնակիցների հայտերի մերժման մասին;
- 9) սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան տեղադրել Գնման հանձնաժողովի նիստերի արդյունքներով կազմված արձանագրությունները;
- 10) պատրաստել գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին հաշվետվությունը, Պատվիրատուին ուղարկել գնումների շարքի համար նախնական ընտրությունը հաջողությամբ անցած մասնակիցների ցուցակը:

Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին ծանուցումը:

- 33.13. Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին ծանուցումը պետք է տեղադրվի գնումների շարքի համար նախնական ընտրությանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտից առնվազն 5 (հինգ) օր առաջ:
- 33.14. Գնման կազմակերպիչը՝ Պատվիրատուի հետ համաձայնեցմամբ, իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրությունից, մինչև նախնական ընտրության արդյունքների ամփոփումը (գնման հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում ընդունելը): Գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրությունից հրաժարվելու մասին ծանուցումը կազմակերպչի կողմից տեղադրվում է Գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրությունից հրաժարվելու մասին որոշում ընդունելուց 3 (երեք) օրվա ընթացքում:
- 33.15. Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին ծանուցումը տեղադրվում է համացանցի պարտադիր կայքերում սույն կանոնակարգի 9-րդ բաժնի՝ «Գնումների տեղեկատվական ապահովումը» պահանջներին համապատասխան:
- 33.16. Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին ծանուցումը պետք է պարունակի.
 - 1) գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին նշումը;
 - 2) Պատվիրատուի և գնման կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը, փոստային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն,

закупок;

- 8) принять решение об отклонении заявок Участников закупки, не соответствующих требованиям документации о порядке проведения предварительного отбора для серии закупок;
- 9) размещать в соответствии с требованиями настоящего Положения протоколы, составленные по результатам заседаний Закупочной комиссии;
- 10) подготовить отчёт о проведении предварительного отбора для серии закупок, направить Заказчику список участников, успешно прошедших предварительный отбор для серии закупок.

Извещение о проведении предварительного отбора для серии закупок

- 33.13. Извещение о проведении предварительного отбора для серии закупок должно быть размещено не менее чем за 5 (пять) дней до истечения срока подачи заявок на участие в предварительном отборе для серии закупок.
- 33.14. Организатор закупки по согласованию с Заказчиком вправе отказаться от проведения предварительного отбора для серии закупок в любое время до момента подведения итогов предварительного отбора (принятия соответствующего решения закупочной комиссией). Извещение об отказе от проведения предварительного отбора для серии закупок размещается Организатором закупки в течение 3 (трех) дней со дня принятия решения об отказе от проведения предварительного отбора для серии закупок.
- 33.15. Извещение о проведении предварительного отбора для серии закупок размещаются на обязательных Интернет-ресурсах в соответствии с требованиями Раздела 9 «Информационное обеспечение закупок» настоящего Положения.
- 33.16. Извещение о проведении предварительного отбора для серии закупок должно содержать:
 - 1) указание на проведение предварительного отбора для серии закупок;
 - 2) наименование, местонахождение, почтовый адрес, адрес электронной почты, номер контактного телефона

կոնսակտային հեռախոսահամարը;

- 3) Տեղեկատվություն Արտադրանքի այն տեսակների մասին, որոնց գնումը հետագայում կարող է իրականացվել գնումների շարքի համար նախնական ընտրությունը հաջողությամբ անցած գնման Մասնակիցների շրջանակում: Արտադրանքի այդպիսի տեսակները կարող են սահմանվել դրանք թվարկելու ճանապարհով կամ այն չափանիշները նշելով, որոնց հիման վրա և որոշվում են Արտադրանքի տվյալ տեսակները;
- 4) Գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրության մասին փաստաթղթերի տրամադրման ժամկետը, վայրը և կարգը, գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրության մասին փաստաթղթերի տրամադրման համար կազմակերպողի կողմից գանձվող գումարի վճարման ժամկետներն ու կարգը, եթե այդպիսի վճար սահմանված է, բացառությամբ գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրության մասին փաստաթղթերի էլեկտրոնային փաստաթղթի տեսքով տրամադրման դեպքերից;
- 5) գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրությանը մասնակցելու հայտերի ուսումնասիրության նախնական ընտրության արդյունքների ամփոփման վայրն ու ամսաթիվը;
- 6) գնումների շարքի համար նախնական ընտրության արդյունքների գործողության ժամկետը:

Գնումների շարքի համար նախնական ընտրության մասին փաստաթղթերը:

- 33.17. Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին ծանուցում տեղադրելու հետ մեկտեղ գնումների կազմակերպիչը տեղադրում է նաև գնումների շարքի համար նախնական ընտրության մասին փաստաթղթերի փաթեթը, որը հավելված է հանդիսանում այդ ծանուցմանը, լրացում, հստակեցնում և պարզաբանում է այն: Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերի փաթեթը պետք է պարունակի նախնական ընտրության բոլոր պահանջներն ու պայմանները, ինչպես նաև այդ ընտրության բոլոր ընթացակարգերի նկարագրությունը:
- 33.18. Մասնակիցներին ներկայացվող պահանջների մասով Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերի մշակման ժամանակ գնումների

Заказчика, Организатора закупки;

- 3) информацию о видах Продукции, закупка которых в дальнейшем может проводиться среди Участников закупки, признанных успешно прошедшими предварительный отбор для серии закупок. Такие виды Продукции могут определяться путём их перечисления или путём указания критериев, на основании которых данные виды Продукции могут быть определены.
- 4) срок, место и порядок предоставления документации о проведении предварительного отбора для серии закупок, размер, порядок и сроки внесения платы, взимаемой Организатором закупки за предоставление документации о проведении предварительного отбора для серии закупок, если такая плата установлена, за исключением случаев предоставления документации о проведении предварительного отбора для серии закупок в форме электронного документа;
- 5) место и дата рассмотрения заявок на участие в предварительном отборе для серии закупок и подведения итогов предварительного отбора;
- 6) срок действия результатов предварительного отбора для серии закупок.

Документация о проведении предварительного отбора для серии закупок

- 33.17. Организатор закупки одновременно с размещением извещения о проведении предварительного отбора для серии закупок размещает документацию о проведении предварительного отбора для серии закупок, которая является приложением к извещению, дополняет, уточняет и разъясняет его. Документация о проведении предварительного отбора для серии закупок должна содержать все требования и условия предварительного отбора, а также подробное описание всех его процедур.
- 33.18. Документация о проведении предварительного отбора для серии закупок разрабатывается Организатором закупки, согласовывается Закупочной комиссией и утверждается

Կազմակերպիչը ղեկավարվում է Պատվիրատուի ցուցումներով:

Председателем Закупочной комиссии.

33.19. Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերի փաթեթը մշակվում է գնումների կազմակերպիչի կողմից, համաձայնեցվում է Գնման հանձնաժողովի կողմից և հաստատվում Գնման հանձնաժողովի նախագահի կողմից:

33.19. При разработке документации о проведении предварительного отбора для серии закупок в части требований к участникам Организатор закупки руководствуется указаниями Заказчика.

33.20. Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերի փաթեթը պետք է տեղադրվի համազանցի պարտադիր կայքերում ոչ ուշ, քան նախնական ընտրությանը մասնակցելու հայտերի տրամադրման ժամկետի ավարտից 25 օր առաջ և սույն կանոնակարգի 9-րդ բաժնի՝ «Գնումների տեղեկատվական ապահովումը» պահանջներին համապատասխան: Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերի փաթեթը պետք է համապատասխանի սույն կանոնակարգի 15-րդ «Մրցակցային գնման անցկացման համար գնման փաստաթղթերի նախապատրաստում, համաձայնեցում և հաստատում» բաժնում նշված պահանջներին, եթե սույն բաժնի պահանջներով այլ բան սահմանված չէ: Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերի փաթեթը չի ներառում պայմանագրի նախագիծը, սակայն կարող է ներառել համաձայնագիր (Մտադրությունների մասին համաձայնություն):

33.20. Документация о проведении предварительного отбора для серии закупок должна быть размещена не менее чем за 25 (двадцать пять) дней до окончания срока подачи заявок на участие в предварительном отборе на обязательных Интернет-ресурсах в соответствии с требованиями Раздела 9 «Информационное обеспечение закупок» настоящего Положения. Документация о проведении предварительного отбора для серии закупок должна соответствовать требованиям, указанным в Разделе 15 /Подготовка, согласование и утверждение документации для проведения конкурентной закупки/ настоящего Положения, если положениями настоящего раздела не установлено иное. В документацию о проведении предварительного отбора для серии закупок не включается проект договора, при этом может включаться соглашение (Соглашение о намерениях).

33.21. Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերի փաթեթի մեջ պարունակվող տեղեկությունները պետք է համապատասխանեն գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին ծանուցման մեջ նշված տեղեկություններին:

33.21. Сведения, содержащиеся в документации о проведении предварительного отбора для серии закупок, должны соответствовать сведениям, указанным в извещении о проведении предварительного отбора для серии закупок.

33.22. Գնումների շարքի համար նախնական ընտրության բոլոր մասնակիցներին ներկայացվող պահանջները հանդիսանում են ընտրական չափանիշներ: Գնահատման չափանիշները գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերի փաթեթով չեն սահմանվում:

33.22. Все требования к участникам предварительного отбора для серии закупок являются отборочными критериями. Оценочные критерии в документации о проведении предварительного отбора для серии закупок не устанавливаются.

33.23. Գնումների շարքի համար նախնական ընտրության անցկացման մասին փաստաթղթերի փաթեթը պետք է ներառի.

33.23. Пакет документация о проведении предварительного отбора для серии закупок должен содержать:

1) տեղեկատվություն Արտադրանքի այն տեսակների մասին, որոնց գնումը հետագայում կարող է կատարել գնումների շարքի համար անցկացված նախնական ընտրությունը հաջողությամբ անցած Մասնակիցների միջև: Արտադրանքի նման տեսակները կարող են որոշվել դրանց թվարկման

1) информацию о видах Продукции, закупка которых впоследствии может производиться среди Участников закупки, признанных успешно прошедшими предварительный отбор для серии закупок. Такие виды Продукции могут определяться путём их

միջոցով, կամ նշելով այն չափանիշները, որոնց հիման վրա և արտադրանքի տվյալ տեսակները կարող են որոշվել:

- 2) գնման Մասնակիցների նկատմամբ պահանջները (նախընտրական չափանիշներ) և սահմանված պահանջներին համապատասխանությունը հաստատող գնման Մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը;
- 3) գնումների շարքի համար նախնական ընտրության մասնակցության հայտերի բովանդակությանը, ձևին և ձևակերպմանը ներկայացվող պահանջները;
- 4) գնումների շարքի համար նախնական ընտրության մասնակցության հայտերի ներկայացման կարգը, վայրը, ժամկետների սկզբի և ավարտի ամսաթվերը;
- 5) գնման Մասնակիցներին գնումների շարքի համար նախնական ընտրության մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանումները տրամադրելու կարգը, այդ տրամադրման ժամկետի սկզբի և ավարտի ամսաթվերը;
- 6) գնման Մասնակիցների հայտերի ուսունասիրության և գնումների շարքի համար նախնական ընտրության արդյունքների ամփոփման վայրն ու ամսաթիվը;
- 7) գնումների շարքի համար նախնական ընտրության մասնակցության հայտերի գնահատման կարգը;
- 8) գնումների շարքի համար նախնական արդյունքների գործողության ժամկետը;
- 9) գնումների շարքի համար նախնական ընտրության արդյունքների գործողության ժամկետի ընթացքում գնման Մասնակցի կողմից պարտադիր կատարմանը ենթակա պարտավորությունները;
- 10) այլ պահանջներ:

33.24. Գնումների շարքի համար նախնական ընտրության մասնակցության մասին փաստաթղթերը չպետք է պարունակեն.

- 1) պայմանագրի նախագիծը (բացառությամբ փաստաթղթերով նախատեսված համաձայնագրի, մտադրությունների մասին համաձայնության),
- 2) գնման Մասնակիցների նկատմամբ գնահատման չափանիշները,
- 3) գնումների շարքի համար նախնական ընտրության ընթացակարգի էությանը չհամապատասխանող այլ դրույթներ:

перечисления или путём указания критериев, на основании которых данные виды продукции могут быть определены;

- 2) требования к Участникам закупки (отборочные критерии) и перечень документов, представляемых Участниками закупки для подтверждения их соответствия установленным требованиям;
- 3) требования к содержанию, форме, оформлению и составу заявок на участие в предварительном отборе для серии закупок;
- 4) порядок, место, дата начала и дата окончания сроков подачи заявок на участие в предварительном отборе для серии закупок;
- 5) порядок, дата начала и дата окончания срока предоставления Участниками закупки разъяснений положений документации о проведении предварительного отбора для серии закупок;
- 6) место и дата рассмотрения заявок Участников закупки и подведения итогов предварительного отбора для серии закупок;
- 7) порядок оценки заявок на участие в предварительном отборе для серии закупок;
- 8) срок действия результатов предварительного отбора для серии закупок;
- 9) обязательства, которые Участник закупки обязан выполнять в течение сроков действия результатов предварительного отбора для серии закупок;
- 10) иные требования.

33.24. Документация о проведении предварительного отбора для серии закупок не должна содержать:

- 1) проект договора (за исключением соглашения, соглашения о намерениях, предусмотренных документацией);
- 2) оценочные критерии в отношении Участников закупки;
- 3) иные положения, не соответствующие сути процедуры предварительного отбора для серии закупок.

33.25. Գնումների շարքի համար նախնական ընտրության արդյունքներով, նախնական ընտրությունը հաջողությամբ անցած գնման Մասնակիցների հետ պայմանագիր չի կնքվում (ստորագրվում), բացառությամբ համաձայնագրի (մտադրությունների մասին համաձայնության) ստորագրման դեպքերի:

33.26. Նախնական ընտրությունը չկայացած է ճանաչվում հետևյալ դեպքերում.

- 1) եթե գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրության ընթացքում չի ստացվել ոչ մի հայտ,
- 2) եթե գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրության ընթացքում ստացվել է միայն մեկ հայտ: Այդպիսի հայտի փորձաքննությունն ու գնահատումը չի կատարվում:
- 3) եթե գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրության մասնակցության հայտերի գնահատման արդյունքում հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրությունը հաջողությամբ անցնելու մասին որոշումը կարող է կայացվել գնման միայն մեկ Մասնակցի նկատմամբ:

33.27. Նախնական ընտրությունը հաջողությամբ անցած ամեն մասնակիցը, գնումների սերիայի համար անցկացրած նախնական ընտրության արդյունքների գործողության ողջ ժամկետի ընթացքում պարտավոր է.

- 1) գնման կազմակերպչին ուղարկել գնման Մասնակցի լիազորված անձի կողմից ստորագրված գրավոր ծանուցումներ, այդ մասնակցին վերաբերվող հետևյալ փաստերի վրա հասնելու մասին.
- 2) գնման Մասնակցի մասին գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրությանը մասնակցելու հայտի մեջ նշված ցանկացած տեղեկատվության փոփոխություն (գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրության մասին փաստաթղթերում նշված պահանջներին համապատասխան ձևակերպված փաստաթղթերի պատճենները կցելով)
- 3) գնման Մասնակցի լիազոր մարմնի կողմից գնման Մասնակցի վերակազմավորման կամ լուծարման մասին որոշում ընդունելը;
- 4) մասնակցի նկատմամբ սնանկության ցանկացած ընթացակարգի կիրառումը;

33.25. По итогам предварительного отбора для серии закупок с Участникам закупки, признанными успешно прошедшими предварительный отбор, договор не заключается (не подписывается), за исключением случаев подписания соглашения (соглашения о намерениях).

33.26. Предварительный отбор признаётся несостоявшимся в следующих случаях:

- 1) если при проведении предварительного отбора для серии закупок не поступило ни одной заявки;
- 2) если при проведении предварительного отбора для серии закупок поступила только одна заявка. Экспертиза и оценка такой заявки не проводится;
- 3) если по результатам оценки заявок на участие в предварительном отборе для серии закупок закупочная комиссия приходит к выводу, что решение о признании успешно прошедшим предварительный отбор для серии закупок может быть принято только в отношении одного Участника закупки.

33.27. Каждый Участник закупки, успешно прошедший предварительный отбор для серии закупок, в течение сроков действия результатов предварительного отбора для серии закупок обязан:

- 1) направлять Организатору закупки письменные уведомления, подписанные уполномоченным лицом Участника закупки, о наступлении следующих фактов в отношении этого Участника закупки:
- 2) изменение любой информации об Участнике закупки, которая была им изложена в заявке на участие в предварительном отборе для серии закупок (с приложением копий подтверждающих документов, оформленных в соответствии с требованиями, изложенными в документации о порядке проведения предварительного отбора для серии закупок);
- 3) принятие уполномоченным органом управления Участника закупки решения о реорганизации или ликвидации Участника закупки;
- 4) применение в отношении участника любой из процедур банкротства;

- 5) արքիտրաժային դատարանի կողմից գնման մասնակցին սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունելը;
- 6) Իշխանության լիազոր մարմնի որոշման հիման վրա գնման Մասնակցի գործունեության կասեցումը;
- 7) ցանկացած այլ փաստ, որի արդյունքում գնման Մասնակիցը դադարեցնում է համապատասխանել գնման շարքի համար նախնական ընտրության մասին փաստաթղթերի պահանջներին:
- 8) Պատվիրատուի կամ գնման կազմակերպչի պահանջով, որը սակայն չի կարող ներկայացվել Մասնակցին երկու օրացույցային ամսվա ընթացքում ավելի քան մեկ անգամ, ներկայացնել փաստաթղթեր, որոնք հաստատում են գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրության փաստաթղթերին գնման Մասնակցի համապատասխանությունը, գնման Մասնակցի կողմից համապատասխան պահանջը ստանալու օրվանից 15 /տասնհինգ/ օրացույցային օրվա ընթացքում:

- 5) принятие к производству арбитражного суда заявления о признании Участника закупки банкротом;
- 6) приостановление деятельности Участника закупки на основании решения уполномоченного органа власти;
- 7) любой иной факт, в результате которого Участник закупки перестаёт соответствовать требованиям документации о проведении предварительного отбора для серии закупок;
- 8) по требованию Организатора закупки или Заказчика, которое не может направляться Участнику закупки чаще одного раза в течение двух календарных месяцев, представлять документы, подтверждающие соответствие Участника закупки требованиям документации о проведении предварительного отбора для серии закупок, в течение 15 (Пятнадцати) календарных дней с даты получения Участником закупки соответствующего требования.

33.28. Գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրությունը հաջողությամբ անցած մասնակիցների ցանկից Մասնակցին հեռացնելու մասին որոշումը կարող է ընդունվել Ընկերության ԳԼՄ-ի կողմից հետևյալ դեպքերում.

- 1) գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրությանը մասնակցելու գնման Մասնակցի ներկայացրած հայտում և/կամ դրան կցված փաստաթղթերում ոչ ստույգ տեղեկատվության բացահայտումը;
- 2) Գնման մասնակիցը դադրել է համապատասխանել գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրության մասին փաստաթղթերով սահմանված պահանջներին:
- 3) Գնման Մասնակիցը գնումների շարքի համար անցկացվող նախնական ընտրության արդյունքների գործողության ընթացքում, ստանալով Պատվիրատուի կամ գնման կազմակերպչի հարցումը, ժամանակին չի ներկայացրել այդ հարցումով պահանջված փաստաթղթերը:

33.28. Решение об исключении Участника закупки из перечня Участников закупки, успешно прошедших предварительный отбор для серии закупок, может быть принято ЦЗО Общества в любом из следующих случаев:

- 1) выявление недостоверной информации, представленной Участником закупки в заявке об участии в предварительном отборе для серии закупок и (или) в приложенных к ней документах;
- 2) Участник закупки перестал соответствовать требованиям, изложенным в документации о проведении предварительного отбора для серии закупок;
- 3) Участник закупки своевременно не предоставил документы по запросу Организатора закупки или Заказчика, полученному Участником закупки в течение срока действия результатов предварительного отбора для серии закупок.

34. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՐԶԵՅՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

34. УПРОЩЕННАЯ ПРОЦЕДУРА ЗАКУПКИ

34.1. Գնումների պարզեցված ընթացակարգը – երբ Ընկերության կարիքների համար ապ-

34.1. Упрощенная процедура закупки – закупка, при которой информация о потребностях в

րանքների, աշխատանքների ծառայությունների մասին տեղեկատվությունը տրամադրվում է մատակարարների (կատարողների, կապալառուների) հասցեներով (զնումներին մասնակցության առնվազն 3 /երեք/ թեկնածուների). Ընթացակարգի հաղթող է ճանաչվում ամենացածր գին և/կամ պայմանագրի կատարման լավագույն պայմաններ առաջարկած զնումների Մասնակիցը:

товарах, работах, услугах для нужд Общества сообщается поставщикам (исполнителям, подрядчикам) адресно (не менее, чем 3 /трём/ претендентам на участие в закупке). Победителем процедуры признается Участник закупки, предложивший наиболее низкую цену и/или наилучшие условия исполнения договора.

34.2. Գնումների պարզեցված ընթացակարգը կարող է կիրառվել հետևյալ արժողության ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման ժամանակ.

- 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամից (առանց ԱԱՀ) ավել մինչև 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) արժողությամբ, այն դեպքում, երբ կազմակերպության տարեկան հասույթը հաշվետու ֆինանսական տարում հարյուր միլիարդ դրամից պակաս է (առանց ԱԱՀ),
- 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամից մինչև 100 000 000 (հարյուր միլիոն) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ արժողությամբ, այն դեպքում, երբ կազմակերպության տարեկան հասույթը հաշվետու ֆինանսական տարում հարյուր միլիարդ դրամից ավելի է (առանց ԱԱՀ):

Գնման պարզեցված ընթացակարգի անցկացման առանձնահատկությունները:

34.3. Գնումների պարզեցված ընթացակարգի անցկացման ժամանակ պայմանագրի Նախաձեռնողը պետք է ապահովի գնվող արտադրանքի շուկայի ուսումնասիրությունը (մրցակցային աղյուսակի կազմումը), ինչպես նաև ապահովել Ընկերության համար առավելագույնս արդյունավետ կոնտրազենտի ընտրությունը.

34.4. Ընկերության պահանջների մասին տեղեկատվությունը պետք է ուղարկվի գնման մասնակցության առնվազն 3 /երեք/ թեքնածուներին:

34.5. Պայմանագրի Նախաձեռնողը իրականացնում է պայմանագրի համաձայնեցման ընթացակարգը, պայմանագրի նախագծին կցելով մրցակցային աղյուսակը, որպես կոնտրազենտի ընտրության հիմնավորում:

34.6. Մրցակցային աղյուսակը պետք է պարունակի հետևյալ տվյալները.

- գնման առարկան, նշելով մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքի կամ մատուցվող ծառայությունների ծավալը,
- գնման սկզբնական /առավելագույն / գինը,
- ապրանքի մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայրը,
- այն կազմակերպությունների անվանումները, որոնց ուղարկվել է կարիքների մասին տեղեկատվությունը՝ նման կազմակերպությունների կոնտակտային

34.2. Упрощенная процедура закупки может применяться при закупке товаров, работ, услуг, имеющих стоимость:

- от 10 000 000 (десяти миллионов) драмов РА (без НДС) до 50 000 000 (пятидесяти миллионов) драмов РА (без НДС), при условии, что годовая выручка Общества за отчетный финансовый год составляет менее ста миллиардов драмов (без учета НДС),
- от 50 000 000 (пятидесяти миллионов) драмов РА (без НДС) до 100 000 000 (ста миллионов) драмов РА (без НДС), при условии, что годовая выручка Общества за отчетный финансовый год составляет более ста миллиардов драмов (без учета НДС).

Особенности проведения упрощенной процедуры закупок

34.3. При проведении упрощенной процедуры закупок Инициатор договора должен обеспечить изучение рынка закупаемой продукции (составление конкурентной карты), а также должен выбрать максимально эффективный для Общества контрагент.

34.4. Информация о требованиях Общества должна отправляться минимум 3 /трём/ кандидатам.

34.5. Инициатор договора осуществляет процедуру согласования договора, прилагая к проекту договора конкурентную карту в качестве обоснования выбора контрагента.

34.6. Конкурентная карта должна содержать следующие данные:

- предмет закупки, с указанием количества поставляемого товара, объема выполняемых работ или предоставляемых услуг,
- начальную /предельную/ цену закупки,
- место поставки товара, выполнения работ, предоставления услуг,
- наименование организаций, которым отправлена информация о потребностях с указанием контактных данных этих организаций,

տվյալների նշումով,

- ստացված առաջարկությունների մասին տվյալները:

35. ՄԻԱՓՈՒԼ ՄՐՅՈՒՅԹ

- 35.1. Միափուլ մրցույթ - մրցակցային սակարկություն, որտեղ հաղթող է ճանաչվում գնումների այն Մասնակիցը, ով առաջարկել էր լավագույն համադրությունը պայմանագրի կատարման և գնումների մասնակցության հայտ, որտեղ ըստ չափորոշիչների հայտարարված համակարգի նրան առաջին տեղն է շնորհվել:
- 35.2. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միափուլ մրցույթի ընթացակարգի կիրառմամբ գնումները անց են կացվում այն դեպքում, երբ Պատվիրատուն կարևորում է պայմանագրի կատարման մի քանի պայմաններ:
- 35.3. Միափուլ մրցույթը կարող է լինել բաց, կամ փակ:
- 35.4. Բաց մրցույթ - մրցակցային սակարկություններ, որոնց ընթացքում Ընկերության ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կարիքների մասին տեղեկատվությունը հայտարարվում է անսահմանափակ անձանց շրջանակում պարտադիր ինտերնետ ռեսուրսներում տեղադրելով բաց միափուլ մրցույթի անցկացման մասին հայտարարություն:
- 35.5. Փակ մրցույթ - գնումների Մասնակիցների սահմանափակ շրջանում անցկացվող մրցակցային սակարկություններ ԳԿՄ-ի որոշմամբ նախապես սահմանված շրջանակի Գնումների մասնակիցների միջև:
- 35.6. Միափուլ մրցույթ անցկացնելիս, որի առարկան է եղել պայմանագրի կնքման իրավունքը, մրցույթի հաղթողի հետ պայմանագիր է կնքվում համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 464-րդ հոդվածի:

36. ԲԱՅ ՄՐՅՈՒՅԹԻ ԱՆՑԱԿՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մրցույթի անցկացման մասին ծանուցում

- 36.1. Գնման կազմակերպչի կողմից մրցույթի անցկացման մասին ծանուցումը տեղադրվում է ոչ ուշ, քան մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտից 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ: Այն դեպքում, երբ մրցույթի անցկացման մասին ծանուցմամբ սահմանվում է

- данные о полученных предложениях.

35. ОДНОЭТАПНЫЙ КОНКУРС

37.7. Գնման կազմակերպիչը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի Գնման մասնակիցների կազմը մնա որպես գաղտնի տեղեկատվություն՝ Գնման մասնակիցներին գաղտնի համաձայնության գալ թույլ չտալու համար:

37.7. Организатор закупки должен принять все меры, чтобы состав Участников закупки оставался конфиденциальной информацией в целях недопущения сговора Участников закупки.

37.8. Գնման բաց ընթացակարգերի անցկացման ժամանակ, գնման ծանուցման ներքո գնման կազմակերպիչը կարող է պահանջել, որպեսզի գնման Մասնակիցները մինչև գնման փաստաթղթերը ստանալը, իր հետ կնքեն գաղտնի տեղեկատվությունը չտարածելու մասին համաձայնագիր: Նշված համաձայնագիրը կնքվում է գնման յուրաքանչյուր Մասնակցի հետ: Ընդ որում, գնման փաստաթղթերը տրվում են միայն գնման Մասնակցի կողմից նման համաձայնագիր ստորագրելուց հետո:

37.8. При проведении закрытых закупочных процедур Организатор закупки может потребовать в извещении о закупке, чтобы Участники закупки до получения закупочной документации заключили с ним соглашение о неразглашении конфиденциальной информации. Указанное соглашение заключается с каждым Участником закупки. При этом закупочная документация предоставляется только после подписания Участником закупки такого соглашения.

37.9. Գնման կազմակերպիչն իրավունք չունի հայտեր ընդունելու գնահատման գնումների

37.9. Организатор закупки не вправе принимать к оценке заявки на участие в закупке от Участ-

այն Մասնակիցներից, որոնց նա մասնակցության չի հրավիրել: Գնման փաստաթղթերով նման իրավունքը կարող է տրվել միայն գնման կոլեկտիվ Մասնակցի կազմում հայտ ներկայացնող անձանց:

37.10. Գնման փակ ընթացակարգում մասնակցելու հայտերի ծրարների բացումը կարող է տեղի ունենալ գնման փաստաթղթերում նշված ամսաթվից շուտ, եթե առկա է բոլոր այն անձանց գրավոր համաձայնությունը, որոնց ուղարկվել է գնման փակ ընթացակարգում մասնակցելու ծանուցում:

37.11. Գնման փակ ընթացակարգի անցկացման ընթացքում կազմվող արձանագրությունները, ինչպես նաև գնման փակ ընթացակարգի անցկացման ընթացքում ստացված տեղեկատվությունը, կարող են տեղադրվել պարտադիր ինտերնետ ռեսուրսներում՝ սույն կանոնակարգի 9-րդ «Գնումների տեղեկատվական ապահովում» բաժնի համաձայն:

37.12. Գնման փակ ընթացակարգերի անցկացման ժամանակ տեսաձայնագրության իրականացումը չի թույլատրվում:

ников закупки, которых он не приглашал к участию. Такое право может быть предоставлено в закупочной документации только лицам, подающим заявку на участие в закупке в составе коллективного Участника закупки.

37.10. Вскрытие конвертов с заявками на участие в закрытой закупочной процедуре может состояться ранее даты, указанной в закупочной документации, при наличии согласия в письменной форме с этим всех лиц, которым были направлены извещения принять участие в закрытой закупочной процедуре.

37.11. Протоколы, составляемые в ходе проведения закрытой закупочной процедуре, а также информация, полученная в ходе проведения закрытой закупочной процедуре, могут быть размещены на обязательных Интернет-ресурсах в соответствии с Разделом 9 «Информационное обеспечение закупок» настоящего Положения.

37.12. При проведении закрытых закупочных процедур не допускается осуществление аудио- и видеозаписи.

38. ԲԱԶՄԱՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹ

- 38.1. Բազմափուլ մրցույթն այն մրցութային սակարկություններն են, որոնք նախատեսում են երկու կամ ավելի փուլերով մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացումն ու ուսումնասիրությունը, որտեղ հաղթող է ճանաչվում մրցույթի այն Մասնակիցը, ով ներկայացրել է պայմանագրի կատարման պայմանների լավագույն համադրությունը և որի հայտը զբաղեցրել է առաջին տեղը՝ համաձայն չափանիշների հայտարարված համակարգի:
- 38.2. Բազմափուլ մրցույթի ընթացակարգի կիրառմամբ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը կատարվում է այն դեպքում, երբ Պատվիրատուի համար կարևոր են պայմանագրի կատարման մի քանի պայմաններ սույն բաժնում նշված հանգամանքների առկայության դեպքում:
- 38.3. Բազմափուլ մրցույթը կարող է լինել բաց կամ փակ:
- 38.4. Բազմափուլ բաց մրցույթը իրենից ներկայացնում է մրցակցային սակարկություններ, որոնց պարագայում ապրանքների, աշխատանքների, ծառայությունների Ընկերության կարիքների մասին տեղեկատվությունը հայտարարվում է անձանց անսահմանափակ շրջանին՝ բաց բազմափուլային մրցույթի անցկացման մասին ծանուցում տեղադրելով պարտադիր ինտերնետ ռեսուրսներում:
- 38.5. Բազմափուլ փակ մրցույթը գնման մասնակիցների սահմանափակ շրջանակով մրցութային այն սակարկություններն են, որոնք անց են կացվում Ընկերության ԳԿՄ-ի որոշմամբ նախապես որոշված շրջանակի գնման Մասնակիցների միջև:
- 38.6. Գնումները կարող են իրականացվել բազմափուլային սակարկության անցկացման ճանապարհով, եթե Պատվիրատուին անհրաժեշտ է բանակցել գնման մասնակիցների հետ, որպեսզի ընտրվի պատվիրատուի պահանջների բավարարման առավել արդյունավետ տարբերակը, այսինքն՝ եթե արտադրանքի բարդ լինելու պատճառով կամ Պատվիրատուի պահանջների բավարարման մի քանի տարբերակների առկայության դեպքում դժվար է միանգամից ձևավորել գնվող արտադրանքի նկատմամբ ներկայացվող պահանջները /պայմանագրի այլ պայմանները/, կամ մրցույթին մասնակցելու հայտերը ներգրավվում են հենց պատվիրատուի պահանջների բավարարման հնարավոր ճանապարհներին ծանոթանալու և դրանցից լավագույնն ընտրելու համար:

38. МНОГОЭТАПНЫЙ КОНКУРС

- 38.1. Многоэтапный конкурс – конкурентные торги, предусматривающие предоставление и рассмотрение заявок на участие в конкурсе в два и более этапов, победителем которых признается Участник закупки, предложивший лучшее сочетание условий исполнения договора и заявке на участие в конкурсе которого было присвоено первое место согласно объявленной системе критериев.
- 38.2. Закупка товаров, работ, услуг путем применения процедуры многоэтапного конкурса проводится в случае, когда для Заказчика важны несколько условий исполнения договора, при наличии обстоятельств указанных в настоящем разделе.
- 38.3. Многоэтапный конкурс может быть открытым или закрытым.
- 38.4. Открытый многоэтапный конкурс – конкурентные торги, при которых информация о потребностях в товарах, работах, услугах Общества сообщается неограниченному кругу лиц путем размещения на обязательных Интернет-ресурсах извещения о проведении открытого многоэтапного конкурса.
- 38.5. Закрытый многоэтапный конкурс – конкурентные торги с ограниченным кругом Участников закупки, проводимые среди заранее определенного решением ЦЗО Общества круга Участников закупки.
- 38.6. Закупки могут осуществляться путем проведения многоэтапного конкурса, если Заказчику необходимо провести переговоры с Участниками закупки, чтобы определить наиболее эффективный вариант удовлетворения потребностей Заказчика, а именно если в силу сложности продукции или при наличии нескольких вариантов удовлетворения нужд Заказчика трудно сразу сформулировать подробные требования к закупаемой продукции (иные договорные условия) либо заявки на участие в конкурсе привлекаются специально для того, чтобы ознакомиться с возможными путями удовлетворения потребностей Заказчика и выбрать наилучший из них.

38.7. Գնումները կարող են իրականացվել բազմափուլ մրցույթի անցկացման ճանապարհով յուրահատուկ կամ տեխնիկական բարդ արտադրանքի դեպքում, ինչպես նաև թանկարժեք գնումների դեպքում, եթե կատարողի որակավորման հարցերը էական դեր են խաղում պայմանագրի հաջողակ կատարման դեպքում: Առաջին փուլով անց է կացվում նախնական որակական ընտրության ընթացակարգը /նախնական որակավորումը/, համաձայն գնման փաստաթղթերի դրույթների:

38.8. Բազմափուլ մրցույթը կարող է անցկացվել նորարարական և այլ բարդ արտադրանքի գնման դեպքում:

Բազմափուլային մրցույթի անցկացման առանձնահատկությունները

38.9. Սույն բաժնով չնախատեսված ցանկացած դեպքերում բազմափուլային մրցույթների անցկացման նկատմամբ կիրառվում են սույն կանոնակարգի 7-րդ բաժնի՝ «Համապատասխանության հաստատում (Հավաստագրում)» դրույթները:

38.10. Բազմափուլային մրցույթի անցկացման մասին ծանուցումը պետք է կատարվի առաջին փուլին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի լրանալուց առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

38.11. Բազմափուլային մրցույթի անցկացման մասին ծանուցումը, ինչպես նաև մրցութային փաստաթղթերը, պետք է հստակ սահմանեն պլանավորված փուլերի քանակը:

38.12. Բազմափուլային մրցույթի առաջին փուլում գնման Մասնակիցները ներկայացնում են մրցութին մասնակցելու տեխնիկական առաջարկներ պարունակող, առանց գնի նշումով սկզբնական հայտերը, ինչպես նաև սահմանված պահանջներին գնման Մասնակիցների համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը: Մրցութային փաստաթղթերով կարող է նախատեսված լինել ծախսերի նախնական նախահաշիվների տրամադրումը՝ սակայն միայն տեղեկատվական նյութի կարգով:

38.13. Առաջին փուլում գնման կազմակերպիչը մրցույթի մասնակցության հայտի ապահովում չպետք է պահանջի:

38.14. Առաջին փուլում գնման կազմակերպիչը գնահատում է մրցութի պահանջներին գնման Մասնակիցների համապատասխանությունը, ինչպես նաև առաջարկության էությունը երկրորդ փուլի մրցութային փաստաթղթերի և վերջնական տեխնիկական առաջադրանքի առումով: Առաջին փուլում

38.7. Закупки могут осуществляться путем проведения многоэтапного конкурса в случаях закупки технически сложной или уникальной продукции, а также при дорогостоящих закупках, если вопросы квалификации исполнителя играют существенную роль в успешности выполнения договора. Первым этапом которого проводится процедура предварительного квалификационного отбора в соответствии с положениями закупочной документации (предквалификации).

38.8. Многоэтапный конкурс может проводиться при закупке инновационной и иной сложной продукции.

Особенности проведения многоэтапного конкурса

38.9. В любых, не предусмотренных настоящим разделом, случаях к проведению многоэтапных конкурсов применяются положения 7-ого раздела («Подтверждение соответствия (Сертификация)»).

38.10. Извещение о проведении многоэтапного конкурса должно быть сделано не менее чем за 30 (тридцать) дней до истечения срока подачи заявок на участие в первом этапе.

38.11. Извещение о проведении многоэтапного конкурса, а также конкурсная документация должны четко определять количество планируемых этапов.

38.12. На первом этапе многоэтапного конкурса Участники закупки представляют первоначальные заявки на участие в конкурсе, содержащие технические предложения без указания цены, а также документы, подтверждающие соответствие Участников закупки установленным требованиям. Конкурсная документация может предусматривать предоставление предварительных смет затрат, но только в качестве справочного материала.

38.13. На первом этапе Организатор закупки не должен требовать обеспечения заявки на участие в конкурсе.

38.14. На первом этапе конкурса Организатор закупки вправе проводить переговоры с любым Участником закупки по любому положению первоначальной заявки на участие в конкурсе. При необходимости переговоров Организатор закупки рассылает Участникам закупки приглашения к переговорам. Если

այն տեխնիկական առաջարկությունների ներկայացումը, որոնք, մրցութային հանձնաժողովի կարծիքով Պատվիրատուի նպատակներին չեն համապատասխանում, կարող է հիմք հանդիսանալ մրցութային հետագա մասնակցությունը մերժելու համար:

иное не указано в конкурсной документации, переговоры ведутся с каждым Участником закупки отдельно. Результаты переговоров оформляются протоколами с обязательным указанием круга обсуждавшихся вопросов. Протоколы подписываются Конкурсной комиссией и присутствующими уполномоченными представителями Участников закупки.

38.15. Մրցութային փուլում գնման կազմակերպիչն իրավունք ունի մրցութային մասնակցելու սկզբնական հայտի ցանկացած դրույթի շուրջ բանակցությունների վարել գնման ցանկացած Մասնակցի հետ: Բանակցությունների անհրաժեշտության դեպքում գնման կազմակերպիչը գնման Մասնակիցներին ուղարկում է բանակցությունների հրավերներ: Բանակցությունները վարվում են գնման ամեն Մասնակցի հետ առանձին, եթե մրցութային փաստաթղթերով այլ բան նախատեսված չէ: Բանակցությունների արդյունքները ձևակերպվում են արձանագրություններով քննարկված հարցի շրջանակի պարտադիր նշումով: Արձանագրությունները ստորագրվում են մրցութային Հանձնաժողովի և գնման Մասնակիցների ներկա լիազոր ներկայացուցիչների կողմից:

38.15. На первом этапе конкурса Организатор закупки вправе проводить переговоры с любым Участником закупки по любому положению первоначальной заявки на участие в конкурсе. При необходимости переговоров Организатор закупки рассылает Участникам закупки приглашения к переговорам. Если иное не указано в конкурсной документации, переговоры ведутся с каждым Участником закупки отдельно. Результаты переговоров оформляются протоколами с обязательным указанием круга обсуждавшихся вопросов. Протоколы подписываются Конкурсной комиссией и присутствующими уполномоченными представителями Участников закупки.

38.16. Մրցութային հանձնաժողովն իրավունք ունի (ինչպես նախքան բանակցություններ անցկացնելը, այնպես էլ դրանց ընթացքում կամ ավարտից հետո) մրցութային հետագա ընթացակարգերից հեռացնել մրցութային փաստաթղթերի մեջ նշված պահանջներին չհամապատասխանող գնման Մասնակիցներին:

38.16. Конкурсная комиссия вправе исключить из дальнейших процедур конкурса (как до переговоров, так во время их или после) Участников закупки, не соответствующих требованиям, указанным в конкурсной документации.

38.17. Առաջին փուլի արդյունքներով Մրցութային հանձնաժողովը պետք է սահմանի երկրորդ փուլի մասնակցության իրավունք ստացած Մասնակիցների ցանկը: Մրցութային ամեն հաջորդող փուլն անցկացնելուց առաջ նաև ձևավորվում է վերջնական տեխնիկական առաջադրանքը և երկրորդ փուլի մրցութային փաստաթղթերը: Երկրորդ փուլի մրցութային փաստաթղթերի մեջ կարող են բացառվել, փոփոխվել կամ լրացվել ցանկացած սկզբնական դրույթները, այդ թվում՝ գնվող արտադրանքի գործառնական, տեխնիկական կամ որակական բնութագրերը, պայմանագրի պայմանները, գնման մասնակիցների նկատմամբ պահանջները, ինչպես նաև մրցութային մասնակցելու հայտերի համեմատման և գնահատման համար ցանկացած ի սկզբանե սահմանված չափանիշները:

38.17. По результатам первого этапа Конкурсная комиссия должна определить перечень Участников закупки, допущенных ко второму этапу. Также перед проведением каждого последующего этапа конкурса формируется окончательное техническое задание и конкурсная документация второго этапа. В конкурсной документации последующего этапа могут быть исключены, изменены или дополнены любые первоначально установленные положения, включая функциональные, технические или качественные характеристики закупаемой продукции, условия договора, требования к Участникам закупки, а также любые первоначально установленные критерии для сопоставления и оценки заявок на участие в конкурсе.

38.18. Մրցութային հաջորդող փուլի մասնակցությանը թույլատրվում են գնման միայն այն Մասնակիցները, որոնք նախորդ փուլի արդյունքներով մրցութային Հանձնաժողովի

38.18. К участию в последующем этапе конкурса допускаются только те Участники закупки, которые по результатам предыдущего этапа допущены Конкурсной комиссией к

կողմից թույլատրվել են մասնակցության: Գնման նշված Մասնակիցներին միաժամանակ ուղարկվում են հասցեագրված հրավերներ, որոնց կցվում է հաջորդող փուլի մրցութային փաստաթղթերի փաթեթը:

38.19. Մրցույթի ամեն հաջորդող փուլի անցկացման մասին ծանուցումը և մրցութային փաստաթղթերը (այդ թվում պայմանագրի նախագիծը) տեղադրվում են պարտադիր ինտերնետ ռեսուրսներում՝ սույն կանոնակարգի 10-րդ «Գնումների տեղեկատվական ապահովում» բաժնի պահանջներին համապատասխան:

38.20. Երկրորդ և հաջորդող փուլերին գնման կազմակերպիչը գնման Մասնակիցներին առաջարկում է ներկայացնել մրցութին մասնակցելու հայտեր, նշելով գինը՝ տեխնիկա-առևտրային ամփոփ առաջարկը: Երկրորդ և հաջորդող փուլերին հայտ ներկայացնելու ցանկություն չունեցող գնման Մասնակիցն իրավունք ունի դուրս գալու մրցույթի հետագա մասնակցությունից:

38.21. Ներկայացվող պահանջներին գնման Մասնակցի համապատասխանությունը գնահատելիս, կազմակերպիչն իրավունք ունի օգտվել առաջին փուլի տեղեկատվությունից (եթե պահանջները այդ մասով չեն փոխվել): Ինչպես նաև իրավունք ունի գնման ցանկացած Մասնակցից պահանջել այդ պահանջներին համապատասխանության հաստատումը:

38.22. Մրցույթի երկրորդ և հաջորդող փուլերին թույլատրվում է գնահատել մրցութին մասնակցելու ստացված հայտերը ինչպես ըստ չափանիշների ամբողջականության, այնպես էլ միայն ըստ գնի: Ամեն դեպքում, գնահատման եղանակի մասին գնման Մասնակիցները ծանուցվում են. Նախապես՝ առաջին փուլի մրցութային փաստաթղթերի միջոցով, վերջնական՝ երկրորդ կամ հաջորդող փուլերի մրցութային փաստաթղթերի միջոցով:

38.23. Բազմափուլային մրցույթի առաջին փուլով կարող է նախատեսվել նախնական որակավորման ընտրության անցկացումը: Ընդ որում, բազմափուլային մրցույթի առաջին փուլի անցկացման մասին ծանուցման մեջ պետք է պարունակվի.

- նախնական որակավորման ընտրության անցկացման մասին տեղեկատվությունը, ինչպես նաև այն մասին, որ հետագայում կուսումնասիրվեն միայն այն գնման Մասնակիցների տեխնիկական կոմերցիոն առաջարկությունները, որոնք հաջողությամբ անցել են նախնական որակավորման ընտրությունը;

участию. Указанным Участникам закупки одновременно направляются адресные приглашения, к которым прилагается конкурсная документация последующего этапа.

38.19. Извещение о проведении каждого последующего этапа конкурса и конкурсная документация (в том числе проект договора) размещаются на обязательных Интернет-ресурсах в соответствии с требованиями Раздела 10 «Информационное обеспечение закупок» настоящего Положения.

38.20. На втором и последующих этапах Организатор закупки предлагает Участникам закупки представить заявки на участие в конкурсе с указанием цены — итоговое технико-коммерческое предложение. Участник закупки, не желающий представлять заявку на второй и последующие этап, вправе выйти из дальнейшего участия в конкурсе.

38.21. При оценке соответствия Участника закупки предъявляемым требованиям Организатор вправе воспользоваться сведениями первого этапа (если требования в этой части не изменились). Он также вправе запросить у любого Участника закупки подтверждение соответствия этим требованиям.

38.22. Допускается на втором и последующих этапах конкурса оценивать поступившие заявки на участие в конкурсе, как по совокупности критериев, так и только по цене. В любом случае, способ оценки доводится до сведения Участников закупки предварительно — в конкурсной документации первого этапа, окончательно — в конкурсной документации второго или последующего этапов.

38.23. Первым этапом многоэтапного конкурса может быть предусмотрено проведение предварительного квалификационного отбора. При этом в извещение о проведении первого этапа многоэтапного конкурса дополнительно должны содержаться:

- информация о проведении предварительного квалификационного отбора и о том, что впоследствии будут рассмотрены технико-коммерческие предложения только тех Участников закупки, которые успешно прошли предварительный квалификационный отбор;

- նախնական որակավորման մասին փաստաթղթերի ստացման կարգի նկարագիրը և դրանց ստացման վայրի մասին նշումը, դրա համար վճարի չափը (եթե նման վճար նախատեսված է), նախնական որակավորման մասին փաստաթղթերի համար վճարի ժամկետների և կարգի մասին տեղեկատվությունը;
- նախնական որակավորման հայտերի ներկայացման կարգի և ավարտի ժամկետի մասին տեղեկատվությունը:

- описание порядка и указание места получения предквалификационной документации, размера платы за нее, если таковая предусмотрена, сроков и порядка внесения оплаты за получение предквалификационной документации;
- информация о сроке окончания и порядке подачи предквалификационных заявок.

38.24. Մրցութային հանձնաժողովը մասնակիցների համապատասխանությունը նախնական որակավորման փաստաթղթերով սահմանված պահանջներին գնահատում է գնման մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Նախնական որակավորման փաստաթղթերով նախկինում չնախատեսված չափանիշների, պահանջների կամ ընթացակարգերի փոփոխումը չի թույլատրվում:

38.24. Конкурсная комиссия оценивает соответствие Участников закупки установленным в предквалификационной документации требованиям на основе представленных Участником документов. Использование не предусмотренных ранее в предквалификационной документации критериев, требований или процедур не допускается.

38.25. Որևէ տեղեկատվության կամ փաստաթղթերի բացակայության դեպքում, որը թույլ չի տալիս գնահատել սահմանված պահանջներին գնման Մասնակցի համապատասխանությունը, գնման կազմակերպիչն իրավասու է նրանից պահանջել պակասող փաստաթղթերը տրամադրելով դրա համար անհրաժեշտ նվազագույն ժամկետը: Եթե սահմանված ժամկետում փաստաթղթերը չեն ներկայացվում, գնման Մասնակիցը համարվում է նախնական որակավորման ընտրությունը չանցած:

38.25. В случае отсутствия какой-либо информации или каких-либо документов, не позволяющих оценить соответствие Участника закупки установленным требованиям, Организатор закупки вправе запросить у него недостающие документы, предоставив для этого минимально необходимый срок. Если в установленный срок документы не представлены, Участник закупки считается не прошедшим предварительный квалификационный отбор.

38.26. Գնման կազմակերպիչը պարտավոր է մրցութային Հանձնաժողովի կողմից նախնական որակավորման ընտրության արդյունքների մասին արձանագրության ստորագրման պահից 3 /երեք/ օրվա ընթացքում պարտադիր ինտերնետ ռեսուրսներում տեղադրել այդպիսի արձանագրություն:

38.26. Организатор закупки обязан в течение 3 (трех) дней со дня подписания протокола Конкурсной комиссией о результатах проведения предварительного квалификационного отбора размещает такой протокол на обязательных Интернет-ресурсах.

38.27. Ընկերության տեղայնացված ակտերին համապատասխան հավատարմագրված ընկերությունները կարող են հայտնել նախնական որակավորման ընտրությանը իրենց մասնակցության մասին՝ սեփական որակավորումը հավատարմագրման մասին վկայականով հաստատելով, ըստ Ընկերության տեղայնացված ակտերով սահմանված ձևի:

38.27. Компании, аккредитованные в соответствии с локальными актами Общества, могут заявить об участии в предквалификационном отборе, подтвердив свою квалификацию свидетельством об аккредитации установленного локальными актами Общества образца.

38.28. Ընտրությունը հաջողությամբ անցած Մասնակիցները հրավիրվում են գնման հետագա ընթացակարգերի: Այդպիսի հրավերի և տեխնիկա-առևտրային առաջարկություններով հայտերի ներկայացման ամսաթվի միջև ընկած ժամկետը պետք է կազմի ոչ պա-

38.28. Участники закупки, успешно прошедшие отбор, приглашаются к дальнейшим процедурам закупки. Срок между таким приглашением и датой подачей заявок с технико-коммерческими предложениями не может составлять менее 20 (двадцати) дней.

Կասքան 20 (քսան) օրը:

39. ԱՃՈՒՐԴ

- 39.1. Աճուրդը գնի նվազեցմանն ուղղած այն մրցակցային սակարկություններն են, որոնց հաղթողն է ճանաչվում գնման փաստաթղթերի պահանջներին համապատասխանող և պայմանագրի ամենացածր գինն առաջարկած գնման մասնակիցը:
- 39.2. Աճուրդը կարող է լինել բաց կամ փակ:
- 39.3. Բաց աճուրդը գնի նվազեցմանն ուղղված այն բաց մրցակցային սակարկություններն են, որոնց դեպքում ապրանքների, աշխատանքների, ծառայությունների Ընկերության պահանջարկի մասին տեղեկատվությունը հայտնիվում է անձանց անսահմանափակ շրջանակին՝ բաց աճուրդի անցկացման մասին ծանուցում տեղադրելով պարտադիր ինտերնետ ռեսուրսներում:
- 39.4. Փակ աճուրդը գնման Մասնակիցների սահմանափակ շրջանակում անցկացվող գնի նվազեցմանն ուղղած մրցակցային սակարկություններ գնման Մասնակիցների միջև են Ընկերության ԳԼՄ-ի որոշմամբ նախատես սահմանված շրջանակում :

Աճուրդի անցկացման առանձնահատկությունները:

Աճուրդի անցկացման մասին ծանուցումը:

- 39.5. Գնման կազմակերպիչը սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան տեղադրում է աճուրդի անցկացման մասին ծանուցում ոչ ուշ, քան աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտից 30 (երեսուն) օր առաջ, իսկ էլեկտրոնային տեսքով բաց աճուրդի անցկացման դեպքում՝ նաև համապատասխան էլեկտրոնային առևտրային հրապարակում:
- 39.6. Աճուրդի անցկացման ծանուցումը պետք է պարունակի սույն կանոնակարգի 16-րդ «Մրցակցային գնման անցկացման համար գնման փաստաթղթերի նախապատրաստում, համաձայնեցում և հաստատում» բաժնին համապատասխան տեղեկությունները:
- 39.7. Մինչև աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի լրանալը, գնման կազմակերպիչը Պատվիրատուի հետ համաձայնեցմամբ, կարող է փոփոխություններ մտցնել աճուրդի անցկացման մասին ծանուցման մեջ: Աճուրդի անցկացման մասին ծանուցման մեջ փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության մասին որոշում ընդունելու օրվանից 3 (երեք) օրվա ընթացքում նման փոփոխությունները տեղադրվում են սույն կանոնակարգի պահանջ-

39. АУКЦИОН

- 39.1. Аукцион – конкурентные торги на понижение цены, победителем которых признается Участник закупки соответствующий требованиям закупочной документации, и предложивший наиболее низкую цену договора.
- 39.2. Аукцион может быть открытый или закрытый.
- 39.3. Открытый аукцион – открытые конкурентные торги на понижение цены, при которых информация о потребностях в товарах, работах, услугах Общества сообщается неограниченному кругу лиц путем размещения на обязательных Интернет-ресурсах извещения о проведении открытого аукциона.
- 39.4. Закрытый аукцион – конкурентные торги на понижение цены с ограниченным кругом Участников закупки, проводимые среди заранее определенного решением ЦЗО Общества круга Участников закупки.

Особенности проведения аукциона

Извещение о проведении аукциона

- 39.5. Организатор закупки не менее чем за 30 (тридцать) дней до дня окончания подачи заявок на участие в аукционе размещает извещение о проведении аукциона в соответствии с требованиями настоящего Положения, а в случае проведения открытого аукциона в электронной форме – и на соответствующей электронной торговой площадке.
- 39.6. Извещение о проведении аукциона должно содержать сведения в соответствии с Разделом 16 /Подготовка, согласование и утверждение закупочной документации для проведения конкурентной закупки/ настоящего Положения.
- 39.7. До истечения срока подачи заявок на участие в аукционе Организатор закупки, по согласованию с Заказчиком, вправе внести изменения в извещение о проведении открытого аукциона. В течение 3 (трех) рабочих дней со дня принятия решения о необходимости внесения изменений в извещение о проведении открытого аукциона такие изменения размещаются в соответствии с требованиями настоящего Положения. При этом срок подачи заявок на

ներին համապատասխան: Ընդ որում, աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետը պետք է նրկարաձգվի այն ժամկետով, որը բավարար կլինի գնման Մասնակիցների կողմից աճուրդին մասնակցելու հայտերի պատրաստման ժամանակ փոփոխությունները հաշվի առնելու համար: Նշված ժամկետը պետք է կազմի առնվազն 30 (երեսուն) օրացուցային օր:

Աճուրդային փաստաթղթերը

- 39.8. Գնումների կազմակերպիչը բաց աճուրդի անցկացման մասին ծանուցում տեղադրելու հետ միաժամանակ, սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան, տեղադրում է աճուրդային փաստաթղթերը, իսկ էլեկտրոնային եղանակով աճուրդի անցկացման դեպքում՝ համապատասխան էլեկտրոնային առևտրային հարթակում:
- 39.9. Աճուրդային փաստաթղթերի մեջ պարունակվող տեղեկությունները պետք է համապատասխանեն բաց աճուրդի անցկացման մասին ծանուցման մեջ նշված տեղեկություններին, հստակեցնեն և պարզաբանեն բաց մրցույթի անցկացման մասին ծանուցման դրույթները:
- 39.10. Ի լրումն սույն կանոնակարգի 16-րդ «Մրցակցային գնման անցկացման համար գնման փաստաթղթերի նախապատրաստում, համաձայնեցում և հաստատում» բաժնում նշված տեղեկությունների, աճուրդային փաստաթղթերը պետք է պարունակեն.
- աճուրդի անցկացման վայրը, ամսաթիվը և ժամանակը (բաց աճուրդի համար); էլեկտրոնային եղանակով բաց աճուրդի անցկացման դեպքում նշվում է համացանցում այն էլեկտրոնային հարթակի հասցեն, որտեղ անցկացվելու է էլեկտրոնային աճուրդը, էլեկտրոնային աճուրդի անցկացման ամսաթիվը և ժամը;
 - «աճուրդի քայլը»
- 39.11. Աճուրդային փաստաթղթերին պետք է կցվի գնման ընթացակարգի արդյունքներով կնքվող պայմանագրի նախագիծը, որը հանդիսանում է աճուրդային փաստաթղթերի անբաժանելի մասը (մի քանի լոտով անցկացվող աճուրդի ժամանակ՝ ամեն լոտի վերաբերյալ պայմանագրի նախագիծը):
- 39.12. Գնման ցանկացած Մասնակցի կողմից բաց աճուրդի մասին ծանուցմամբ սահմանված կարգով ձևակերպված և ներկայացրած հարցումով, գնման կազմակերպիչը թղթային եղանակով տրամադրում է աճուրդային փաստաթղթերը: Ընդ որում, թղթային

участие в аукционе должен быть продлен на срок, достаточный для учета Участниками закупки при подготовке заявок на участие в аукционе изменений. Указанный срок должен составлять не менее чем 30 (тридцать) календарных дней.

Аукционная документация

- 39.8. Организатор закупок одновременно с размещением извещения о проведении открытого аукциона в соответствии с требованиями настоящего Положения размещает аукционную документацию, а в случае проведения открытого аукциона в электронной форме - на соответствующей электронной торговой площадке.
- 39.9. Сведения, содержащиеся в аукционной документации, должны соответствовать сведениям, указанным в извещении о проведении открытого аукциона, должны конкретизировать и разъяснять положения извещения о проведении открытого аукциона.
- 39.10. В дополнение к сведениям, указанным в Разделе 16 /Подготовка, согласование и утверждение закупочной документации для проведения конкурентной закупки/ настоящего Положения, аукционная документация должна содержать:
- место, дата и время начала проведения аукциона (для открытого аукциона); при проведении открытого аукциона в электронной форме указывается адрес электронной площадки в сети «Интернет», на которой будет проводиться открытый аукцион в электронной форме, дата и время начала проведения аукциона в электронной форме;
 - «шаг аукциона».
- 39.11. К аукционной документации должен прилагаться проект договора, заключаемого по результатам процедуры закупки, который является неотъемлемой частью аукционной документации (при проведении аукциона по нескольким лотам – проект договора в отношении каждого лота).
- 39.12. По запросу любого Участника закупки, оформленному и представленному в порядке, установленном в извещении о проведении открытого аукциона, Организатор закупок предоставляет аукционную документацию на бумажном

ենդանակով աճուրդային փաստաթղթերը տրամադրվում են գնման Մասնակցի կողմից աճուրդային փաստաթղթերի տրամադրման համար վճարում կատարելուց հետո, եթե այդպիսի վճար սահմանված է և դրա մասին ցուցումը առկա է բաց աճուրդի անցկացման մասին ծանուցման մեջ:

39.13. Գնման ցանկացած Մասնակիցն իրավունք ունի գնման կազմակերպչին գրավոր հարցում անել աճուրդային փաստաթղթերի պարզաբանման վերաբերյալ ոչ ուշ, քան աճուրդի մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտից 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Աճուրդային փաստաթղթերի դրույթների պարզաբանման վերաբերյալ հարցումը ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գնման կազմակերպչին այդպիսի պարզաբանումները տեղադրում է սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան (առանց հղում կատարելու այն Մասնակցին, որից ստացվել է պարզաբանման հարցումը):

Աճուրդներ անցկացնելու մերժում

39.14. Մրցույթի կազմակերպիչը Պատվիրատուի հետ համաձայնեցնելով, իրավասու է բաց աճուրդի անցկացման մերժման որոշում կայացնել ցանկացած ժամանակ մինչև աճուրդի չափողի որոշելը սույն կանոնակարգի 19-րդ «Հրաժարում մրցակցային գնման հետագա անցկացումից» բաժնով սահմանված կարգով:

Աճուրդին մասնակցելու հայտի պահանջները

39.15. Աճուրդին մասնակցելու նպատակով, գնումների Մասնակիցը պետք է աճուրդին մասնակցելու հայտ ներկայացնի, որը ձևավորված է աճուրդային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Աճուրդին մասնակցելու հայտի ապահովումը:

39.16. Աճուրդի փաստաթղթերը կարող են ներառել աճուրդին մասնակցելու հայտի ապահովման մասին պահանջ, որը հավասար կերպով տարածվում է գնումների բոլոր Մասնակիցների վրա:

39.17. Կազմված աճուրդին մասնակցելու հայտ ներկայացնելու հետ, Գնումների Մասնակցի պարտավորությունների կատարման նկատմամբ կարող է սահմանվել դրամական միջոցների վճարման մասին պահանջ, որպես աճուրդին մասնակցելու հայտ ներկայացնելու ապահովման կանխավճար: Աճուրդին մասնակցելու հայտի ապահովման չափը չպետք է գերազանցի բաց

носителе. При этом, аукционная документация на бумажном носителе выдается после внесения Участником закупки за предоставление аукционной документации, если такая плата установлена и указание об этом содержится в извещении о проведении открытого аукциона.

39.13. Любой Участник закупки вправе направить Организатору закупки запрос о разъяснении положений аукционной документации в письменной форме в срок не позднее чем за 5 (пять) рабочих дней до дня окончания подачи заявок на участие в аукционе. Организатор закупок в течение 5 (пяти) рабочих дней со дня поступления запроса на разъяснение положений аукционной документации размещает такие разъяснения (без указания наименования Участника закупки, от которого был получен запрос на разъяснения) в соответствии с требованиями настоящего Положения.

Отказ от проведения аукциона

39.14. Организатор закупки по согласованию с Заказчиком вправе принять решение об отказе от проведения открытого аукциона в любое время до определения Победителя аукциона в порядке, установленном в Разделе 19 /Отказ от дальнейшего проведения конкурентной закупки/ настоящего Положения.

Требования к заявке на участие в аукционе

39.15. Для участия в аукционе Участник закупки должен подать заявку на участие в аукционе, оформленную в полном соответствии с требованиями аукционной документации.

Обеспечение заявки на участие в аукционе

39.16. Аукционная документация может содержать требование об обеспечении заявки на участие в аукционе, которое в равной степени распространяется на всех Участников закупки.

39.17. Исполнение обязательств Участника закупки в связи с подачей заявки на участие в аукционе может быть установлено требование о внесении денежных средств в качестве задатка для обеспечения заявки на участие в аукционе. Размер обеспечения заявки на участие в аукционе не должен превышать 5 /пяти/ процентов начальной /максимальной/ цены договора /цены лота/,

աճուրդի անցկացման ծանուցագրում նշված պայմանագրի սկզբնական գնի /լոտի գնի/ /առավելագույն/ 5 /հինգ/ տոկոսը:

39.18. Աճուրդին մասնակցելու հայտի ներկայացման հետ կապված Մասնակցի պարտավորությունները ներառում են.

- աճուրդի փաստաթղթերի և աճուրդին մասնակցելու հայտի անբակտելի մաս հանդիսացող պայմանագրի նախագծում նշված պայմանների հիման վրա պայմանագրի կնքման պարտավորությունը, ինչպես նաև մինչև պայմանագրի կնքումը Պատվիրատուին ներկայացնել պայմանագրի կատարման ապահովումը, այն դեպքում, եթե նման պարտականությունը սահմանված է աճուրդի փաստաթղթերի պայմաններով,
- աճուրդին մասնակցելու հայտի ներկայացման ժամկետի լրանալուց հետո աճուրդին մասնակցելու հայտը չփոփոխելու և (կամ) հետ չկանչելու պարտավորությունը:

39.19. Գնումների կազմակերպիչը աճուրդին մասնակցելու հայտի ապահովման գումարը պահում է գնումների Մասնակցի կողմից սույն կանոնակարգի 38.18. կետով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում: 39.18. կետով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում.

Աճուրդին մասնակցելու հայտի ապահովումը վերադարձվում է.

- գնումների Մասնակիցներին, որոնք կատարել են Աճուրդին մասնակցելու հայտի ապահովումը աճուրդի անցկացման մերժման որոշում կայացնելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
- գնումների Մասնակցին, որը աճուրդին մասնակցելու հայտ է ներկայացրել աճուրդին մասնակցելու հայտի ներկայացման ավարտից հետո նման հայտ ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
- գնումների Մասնակցին, որը աճուրդին մասնակցելու հայտ է ներկայացրել և հետ է կանչել նման հայտը մինչև աճուրդին մասնակցելու հայտի քննարկման ընթացակարգի սկսելու օրը և ժամը աճուրդին մասնակցելու հայտի հետ կանչելու մասին ծանուցում ստացվելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
- գնումների Մասնակցին, որը աճուրդին մասնակցելու միակ հայտն է ներկայացրել, որը համապատասխանում է աճուր-

указанной в извещении о проведении открытого аукциона.

39.18. Обязательства Участника закупки, связанные с подачей заявки на участие в аукционе, включают:

- обязательство заключить договор на условиях, указанных в проекте договора, являющегося неотъемлемой частью аукционной документации, и заявки на участие в аукционе, а также обязательство до заключения договора предоставить Заказчику обеспечение исполнения договора, в случае если такая обязанность установлена условиями аукционной документации;
- обязательство не изменять и (или) не отзываться заявку на участие в аукционе после истечения срока окончания подачи заявок на участие в аукционе.

39.19. Организатор закупок удерживает сумму обеспечения заявки на участие в аукционе в случаях невыполнения Участником закупки обязательств, предусмотренных пунктом 39.18. настоящего Положения. В случае невыполнения предусмотренных пунктом 39.18 обязательств.

Обеспечение заявки на участие в аукционе возвращается:

- Участникам закупки, внесшим обеспечение заявок на участие в аукционе - в течение 5 (пяти) рабочих дней со дня принятия решения об отказе от проведения аукциона;
- Участнику закупки, подавшему заявку на участие в аукционе после окончания подачи заявок на участие в аукционе – в течение 5 (пяти) рабочих дней со дня получения такой заявки;
- Участнику закупки, подавшему заявку на участие в аукционе и отозвавшему такую заявку до дня и времени начала процедуры рассмотрения заявок на участие в аукционе – в течение 5 (пяти) рабочих дней со дня поступления уведомления об отзыве заявки на участие в аукционе;
- Участнику закупки, подавшему единственную заявку на участие в аукционе, которая соответствует всем

դի փաստաթղթերով նախատեսված բոլոր պահանջներին և պայմաններին նման գնումների Մասնակցի հետ պայմանագրի կնքման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,

- գնումների Մասնակցին, աճուրդին մասնակցելու միակ հայտն է ներկայացրել և որին թույլ չի տրվել մասնակցելու աճուրդին, աճուրդին մասնակցելու հայտի քննարկման արձանագրության ստորագրման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
- գնումների միակ Մասնակցին, որը ճանաչվել է աճուրդի մասնակից, գնումների նման Մասնակցի հետ պայմանագրի կնքման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
- գնումների Մասնակցին, որը միակն է, ով ներկայացել է աճուրդին և գրանցվել է համապատասխան սույն կանոնակարգի նորմերի, նման գնումների Մասնակցի հետ պայմանագրի կնքման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
- գնումների Մասնակցին, որը մասնակցել է աճուրդին, բայց չի ճանաչվել որպես աճուրդի Հաղթող, որը նախավերջինն է ներկայացրել պայմանագրի գնի առաջարկ, աճուրդի արձանագրության ստորագրման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
- գնումների Մասնակցին, որը նախավերջինն է ներկայացրել պայմանագրի գնի առաջարկ, աճուրդի Հաղթողի կամ աճուրդի նման Մասնակցի հետ պայմանագրի կնքման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
- աճուրդի Հաղթողին, վերջինիս հետ պայմանագրի կնքման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Աճուրդին մասնակցելու հայտի ներկայացման կարգը

- 39.20. Մինչև աճուրդին մասնակցելու հայտի ներկայացման ժամկետի ավարտը, որը սահմանված է բաց աճուրդի անցկացման մասին ծանուցագրում, գնումների կազմակերպիչը իրականացնում է աճուրդի մասնակցության հայտերի ընդունում:
- 39.21. Աճուրդին մասնակցելու համար գնումների Մասնակիցը փակ ծրարով պետք է աճուրդի մասնակցության հայտը ներկայացնի աճուրդի փաստաթղթերով սահմանված ձևով և կարգով: Գնումների Մասնակիցը իրավունք ունի աճուրդի յուրաքանչյուր

требованиям и условиям, предусмотренным аукционной документацией – в течение 5 (пяти) рабочих дней со дня заключения с договором с таким Участником закупки;

- Участнику закупки, подавшему заявку на участие в аукционе и не допущенному к участию в аукционе – в течение 5 (пяти) рабочих дней со дня подписания протокола рассмотрения заявок на участие в аукционе;
- единственному Участнику закупки, признанному Участником аукциона – в течение 5 (пяти) рабочих дней со дня заключения договора с таким Участником закупки;
- Участнику аукциона, который единственный явился на аукцион и был зарегистрирован в соответствии с нормами настоящего Положения – в течение 5 (пяти) рабочих дней со дня заключения договора с таким Участником закупки;
- Участнику аукциона, который участвовал в аукционе, но не стал Победителем аукциона, за исключением Участника аукциона, сделавшего предпоследнее предложение о цене договора – в течение 5 (пяти) рабочих дней со дня подписания протокола аукциона;
- Участнику аукциона, сделавшего предпоследнее предложение о цене договора - в течение 5 (пяти) рабочих дней со дня заключения договора с Победителем аукциона или с таким Участником аукциона;
- Победителю аукциона – в течение 5 (пяти) рабочих дней со дня заключения с ним договора.

Порядок подачи заявок на участие в аукционе

- 39.20. До окончания срока подачи заявок на участие в аукционе, установленного в извещении о проведении открытого аукциона, Организатор закупок осуществляет прием заявок на участие в аукционе.
- 39.21. Для участия в аукционе Участник закупки должен подать в запечатанном конверте заявку на участие в аукционе по форме и в порядке, установленными аукционной документацией. Участник закупки вправе подать одну заявку на участие в аукционе в

առարկայի (լոտի) նկատմամբ ներկայացնել մեկական հայտ:

отношении каждого предмета аукциона (лота).

39.22. Մինչև աճուրդին մասնակցելու հայտի ներկայացման ժամկետի ավարտը ստացված աճուրդի մասնակցության բոլոր հայտերը գրանցվում են գնումների կազմակերպչի կողմից: Գնումների Մասնակցի պահանջով գնումների կազմակերպիչը ստորագրում է աճուրդին մասնակցելու հայտի ծրարի ստացման համար՝ նշելով վերջինիս ստացման օրը և ժամը:

39.22. Все заявки на участие в аукционе, полученные до истечения срока подачи заявок на участие в аукционе, регистрируются Организатором закупки. По требованию Участника закупки Организатор закупок выдает расписку о получении конверта с заявкой на участие в аукционе, с указанием даты и времени его получения.

39.23. Գնումների կազմակերպիչը պարտավոր է ապահովել նման հայտերում առկա տեղեկությունների գաղտնիությունը:

39.23. Организатор закупки обязан обеспечивать конфиденциальность сведений, содержащихся в таких заявках.

39.24. Գնումների Մասնակիցն իրավունք ունի նախկինում ներկայացրած աճուրդին մասնակցելու հայտը փոփոխել կամ հետ կանչել աճուրդի փաստաթղթերով նախատեսված կարգով: Աճուրդին մասնակցելու հայտի փոփոխման և (կամ) հետ կանչելը աճուրդին մասնակցելու հայտի ներկայացման ժամկետի լրանալուց հետո, որը սահմանված է աճուրդի փաստաթղթերով, չի թույլատրվում:

39.24. Участник закупки вправе изменить или отозвать ранее поданную заявку на участие в аукционе в порядке, предусмотренном аукционной документацией. Изменение и (или) отзыв заявок на участие в аукционе после истечения срока подачи заявок на участие в аукционе, установленного аукционной документацией, не допускается.

39.25. Եթե աճուրդին մասնակցելու հայտի ներկայացման ժամկետի լրանալուց հետո, որը սահմանված է աճուրդի փաստաթղթերով, Գնումների կազմակերպչի կողմից ստացվում է աճուրդին մասնակցելու միայն մեկ հայտ կամ չի ստացվում աճուրդին մասնակցելու և ոչ մի հայտ, աճուրդը ճանաչվում է չկայացած:

39.25. Если по окончании срока подачи заявок на участие в аукционе, установленного аукционной документацией, Организатором закупок будет получена только одна заявка на участие в аукционе или не будет получено ни одной заявки на участие в аукционе, аукцион будет признан несостоявшимся.

39.26. Այն դեպքում, եթե աճուրդի փաստաթղթերով նախատեսված է երկու կամ ավելի լոտ, աճուրդը ճանաչվում է չկայացած միայն այն լոտերի նկատմամբ, որոնց նկատմամբ աճուրդին մասնակցելու միայն մեկ հայտ է ներկայացվել կամ չի ներկայացվել աճուրդին մասնակցելու որևէ հայտ:

39.26. В случае если аукционной документацией предусмотрено два и более лота, аукцион признается несостоявшимся только в отношении тех лотов, в отношении которых подана только одна заявка на участие в аукционе или не подана ни одна заявка на участие в аукционе.

39.27. Եթե աճուրդի փաստաթղթերով սահմանված աճուրդին մասնակցելու հայտի ժամկետի ավարտին գնումների կազմակերպիչը ստանում է աճուրդին մասնակցելու միայն մեկ հայտ, Աճուրդի հանձնաժողովը նման հայտով ծրարը բացում է և քննարկում այն սույն կարգով սահմանված կարգով: Եթե քննարկվող աճուրդին մասնակցելու հայտը և նման հայտ ներկայացրած գնումների Մասնակիցը համապատասխանում են աճուրդի փաստաթղթերով նախատեսված պահանջներին և պայմաններին, Պատվիրատուն Ընկերության ԳԿՄ որոշման հիման վրա նման գնումների Մասնակցի հետ կնքում է պայմանագիր:

39.27. Если к окончанию срока подачи заявок на участие в аукционе, установленного аукционной документацией, Организатором закупок будет получена только одна заявка на участие в аукционе, Аукционная комиссия осуществляет вскрытие конверта с такой заявкой и рассматривает ее в порядке, установленном настоящим Положением. Если рассматриваемая заявка на участие в аукционе и подавший такую заявку Участник закупки соответствует требованиям и условиям, предусмотренным аукционной документацией, Заказчик на основании решения ЦЗО Общества заключает договор с таким Участником закупки.

39.28. Սույն Կանոնակարգի 39.27-րդ կետում նկարագրված դեպքում և ԳԿՄ որոշման հիման վրա, պայմանագիրը կնքվում է աճուրդի փաստաթղթերով նախատեսված պայմաններով բաց աճուրդ անցկացնելու ծանուցագրում նշված պայմանագրի սկզբնական գնով (լոտի գնով) կամ նշված հայտը ներկայացրած գնումների Մասնակցի հետ համաձայնեցված պայմանագրի գնով, որը չի գերազանցում պայմանագրի սկզբնական գինը (լոտի գինը):

39.29. Աճուրդին մասնակցելու հայտերը, որոնք գնումների Կազմակերպիչը ստացել է աճուրդի փաստաթղթերով սահմանված աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետը լրանալուց հետո, չեն քննարկվում:

Աճուրդին մասնակցելու հայտերի քննարկումը

39.30. Աճուրդի հանձնաժողովը աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ավարտի օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվանից ոչ ավել ժամկետում բացում է հայտերով ծրարները և քննարկում է գնումների Մասնակիցների աճուրդին մասնակցելու հայտերը, աճուրդին մասնակցելու բացված հայտերը, գնումների յուրաքանչյուր Մասնակցի համապատասխանության որոշումը աճուրդի փաստաթղթերով սահմանված պահանջներին, և գնումների նման Մասնակցի կողմից ներկայացված աճուրդին մասնակցելու հայտի համապատասխանությունը աճուրդի փաստաթղթերով սահմանված պահանջներին: Աճուրդին մասնակցելու հայտերի քննարկման արդյունքներով, Աճուրդի հանձնաժողովը որոշում է կայացնում գնումների Մասնակցին ճանաչել որպես աճուրդի Մասնակից կամ մերժել գնումների Մասնակցին որպես աճուրդի Մասնակից ճանաչելը: Աճուրդի հանձնաժողովի որոշումը կազմվում է համապատասխան արձանագրությամբ:

39.31. Գնումների Մասնակիցը կմերժվի աճուրդի Մասնակից ճանաչվելուց հետևյալ դեպքերում.

- փաստաթղթերի բնօրինակների կամ պատճենների, ինչպես նաև այլ տեղեկությունների չտրամադրման դեպքում, որոնց առկայության պահանջը սահմանված է աճուրդի փաստաթղթերով կամ նման փաստաթղթերում գնումների Մասնակցի կամ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, համապատասխանաբար մատակարարման, իրականացման, մատուցման համար իրականացվող գնման մասին ոչ հավաստի տեղեկությունների առկայության դեպքում,

39.28. В случае, описанном в пункте 39.27 настоящего Положения и на основании решения ЦЗО, договор заключается на условиях, предусмотренных аукционной документацией, по начальной цене договора (цене лота), указанной в извещении о проведении открытого аукциона, или по согласованной с подавшим указанную заявку Участником закупки и не превышающей начальной цены договора (цены лота) цене договора.

39.29. Заявки на участие в аукционе, полученные Организатором закупок после окончания срока подачи заявок на участие в аукционе, установленного аукционной документацией, не рассматриваются.

Рассмотрение заявок на участие в аукционе

39.30. Аукционная комиссия в срок не более 10 (десяти) рабочих дней со дня окончания подачи заявок на участие в аукционе вскрывает конверты с заявками и рассматривает заявки на участие в аукционе Участников закупки, заявки на участие в аукционе которых вскрыты, с целью определения соответствия каждого Участника закупки требованиям, установленным аукционной документацией, и соответствия заявки на участие в аукционе, поданной таким Участником закупки, требованиям к заявкам на участие в аукционе, установленным аукционной документацией. По результатам рассмотрения заявок на участие в аукционе Аукционной комиссией принимается решение о признании Участника закупки Участником аукциона или об отказе в признании Участника закупки Участником аукциона. Решение Аукционной комиссии оформляется соответствующим протоколом.

39.31. Участнику закупки будет отказано в признании его Участником аукциона в случаях:

